

մեր մէջ վարժութիւն, վարժապետ, վարժարան,
վարժել բառերը: Սանատրուկի որդւոյն Արտաշէս
մանկանը իւր դայեակը Սմբատ Բագրատունին ա-
զատեց Երուանդայ սուրէն: Լուսաւորիչը ունէր
դայեակ Սուրիա անուն, որ նրան երեսայութեան
ժամանակը փախցրեց Վեսարիա: Տրդատին՝ իւր
դայեակը՝ Արտաւազգ: Մանդակունին տարաւ Հը-
ռոմ, և Հայոց թագաւորութեանն հասոյց: Լէոն
Գ՝ Հայոց Վիլիկեցոյ թագաւորը ունէր դաստիա-
րակ զՆոստանդին Վաթողիկոսն, որոյ ձեռամբ զը-
րած աւետարանն կայ ի նոր նախիջեան: Բայց
վարձկան մայրազրի և հայրազրի անյաջող ընտ-
րութիւնը՝ բազմիցս ունեցել է և վատ հետեանք,
որ ըստ մեծի մասին երեւել է երեխի բնաւորութեան
խանդարմանց մէջ, և յետագայ տարիները ի յայտ
են եկել: Ի հարկէ՝ այս կապտահի այնպիսի երե-
խանց՝ որ իւրեանց ծնողաց ջանակուռ հսկողու-
թենէն և վերատեսչութենէն զրկուած են և իս-
պառ թողած են այն վարձկաններին ապաստան:
Խօսք չկայ, որ շատ սակաւ ծնողք կան՝ որ հաս-
կացած լինին և հասկանան թէ իւրեանց ծայրա-
դոյն ծնողական պարտաւորութիւնն այն է, որ շատ
աւելի աչքը բաց և զգուշաւոր զգաստութեամբ
և ճշդութեամբ նային այն վարձկան դաստիարակ-
ների վերայ, որ այն անմեղ զաւակաց անունը
գեռ ևս իւրեանց կենաց առաջին տարիքներումը
վատ հետեանքներ չգուշակէ: և լաւ իմանան՝ որ
միայն իրանց անձնական ազդեցութեամբ կարէ ե-
րեխայն աջողակ զարգանալ: մօր ազդեցութեան
տակ կկազմակերպուին նորա զգացումները և երե-
ւակերպութիւնքը: իսկ հօր ազդեցութեան տակ՝
կհաստատուին և ուժ կառնուն նորա միտքն, խել-
քը և կամքը:

(Մնացեալն է յետագայ:)

ՊԱՆԴՈՒԽՏ:

Քնարիս կողքին պառկած եմ տխուր,
Մատերս անզօր են ձայն տալ լարերուն.
Յանկարծ զարթնում է մի քաղցր յիշատակ
Սրտումս արեւոծ վշտից տարուբեր:

Եւ այդ մայրական քնքոյշ օրօրներ,
Որ ոգ'ւորում՝ ձեռքերս գողտջուն,
Լարեր հնչումեն ախ շատ կաթողին,
Եւ արտասուքս առատ հոսումեն:

Ո՛հ, ի՞նչ սրբանուէր րոպէք խնկելի,
Պատկերանումեն հոգուս առաջն.

Որոց մէջ յաճախ համբոյրն մայրական
Սրբել արցունքներ մատաղ օրերի:

Բայց ո՛հ, ո՛ր թռան այդ անգին ժամեր . . .
Տարան իւրեանց հետ կենսատու վայելք

Նոցա փոխարէն կեանքի դառնութիւն
Լի դժոխային թունաւոր նետով:

Արումեմ՝ օտար ափերում՝ դժբաղդ
Անձուկ բուռն ի վիշտս յաւէտ բարդ ի բարդ . . .

Աւաղ Հայրենիք սիրուն Հայաստան
Վեհից զիւցազանց փառաց օթեան:

Եւ ծոց մայրենի անոյշ ինձ համար
Քան թէ օտարի փառք ու մեծարանք . . .

Որոյ կարօտը պիտ' երկար մաշէ

Զիս վատաբաղդ տար աշխարհներում:

ԳՐԵԺՈՐ ՏԵՐ ԸՄԱԳԷԱՆ

Խօջայ ՄԱՐԱԳԷԱՆԿ:

յնէն:

ԱՌ ԱՅԳԵՊԱՆ

Ո՛վ պղծական բազմախնամ քրտնաջան,

Ա՞ն ինչ զտունկսդ ոռոգանես բարեջան,

Հոգաս բրես շուրջ զդովաւ անդադար,

Յուսաս պտուղ քաղել այտի հիւթարար:

Այո՛, քանզի ճիգն թափեմ և ցանկամ,

Զի ընկալայց զախորժ պտուղս քաղցրահամ:

Որք զպաքեալ զովացուցեն զիմ բերան,

ԶԴմետրեան ձօնից եղէց զոհարան:

Ո՛հ, եթէ ոչ կատարեսցի քոյդ փափագ,

Զի՛նչ դու առնես ընդ ծառդ ընդ այն սին պիտակ:

Յայնժամ և ես տապարահար ի կործան,

Արկից տարայց հրոյն մատնեցից ի բերան:

Սապէս և մէք, Հայր Աւհափառ Հայ հօտին,

Ծառք եմք տնկեալ դպրոցական ի դաւթին:

Քեւ դարմանեալ քո խնամքդ ծաղկեցուք,

Քո օրհնութեամբ բեղմնաւորիլ կարասցուք: